ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/103

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն
Մասնակից՝ «Վիոլետա բժշկական կենտրոն» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Վիոլետա բժշկական կենտրոն» ՍՊԸ-ի տնօրեն՝ Լ. Սարգսյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2021/5» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, դեղերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.04.2021թ.-ի թիվ 26/26-1/5691-2021 գրությամբ «Վիոլետա բժշկական կենտրոն» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարության 12.04.2021թ.-ի թիվ ԱԱ/06.3/7298-2021 գրության հիման վրա, 15.04.2021թ.-ին «Վիոլետա բժշկական կենտրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 15.04.2021թ.-ին:

16.04.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/103 համարի ծածկագիրը:

28.04.2021թ.-ին և 14.05.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 28.04.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 14.05.2021թ.-ին:

2. ՀՀ առողջապահության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ առողջապահության նախարարությունը 12.04.2021թ.-ի թիվ ԱԱ/06.3/7298-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ դեղեր ձեռքբերելու նպատակով, իրականացվել է «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2021/5» և «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2021/5» ծածկագրերով գնման ընթացակարգեր: Գնման ընթացակարգի արդյունքում «Վիոլետա բժշկական կենտրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատվել են անբավարար և մերժվել՝ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանելու հիմքով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2021/5» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Վիոլետա բժշկական կենտրոն» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Վիոլետա բժշկական կենտրոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 16.04.2021թ.-ի գրությամբ դիմել է «Վիոլետա բժշկական կենտրոն» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.04.2021թ.-ի թիվ 26/26-1/5691-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով գրավոր կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ բանավոր կերպով հայտնելով իր դիրքորոշումը նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ:

4. <u>ՍՑ-LO-2021/103 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից դեղերի ձեռքբերման նպատակով 09.02.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2021/5» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ կամ Մրցույթ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Վիոլետա բժշկական կենտրոն» ՍՊԸ-ն:

iii. «Վիոլետա բժշկական կենտրոն» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2021/5» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. 30.03.2021թ.-ին «Վիոլետա բժշկական կենտրոն» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ «Վիոլետա բժշկական կենտրոն» ՍՊԸ-ն, ներկայացնելով իր գնային առաջարկը ճանաչվել է ամենացածր գին ներկայացնող մասնակից մի քանի չափաթաժիններով, սակայն բանակցությունների փուլում պարզվել է, որ մինչ մասնակցության հայտը ներկայացնելը ըստ արտադրողի տրամադրած Միջազգային և Եվրոպական գրանցում ունեցող դեղամիջոցներ են, որն էլ մասնակցության հիմք է

հանդիսացել: «Վիոլետա բժշկական կենտրոն» ՍՊԸ-ի առաջին անգամ մասնակցելու և որոշակի անփորձության պատճառով հստակ չենք ընկալել մասնակցության պայմանները, փաստաթղթերի անհրաժեշտությունը, այդ իսկ պատճառով առաջացել է որոշակի անհամապատասխանություն: Ուստի, հաշվի առնելով այն, որ մրցույթի վերջնական հաղթողների և մատակարարվող դեղամիջոցների ամփոփիչ որոշում չի կայացվել և պայմանագիր չի կնքվել և այս փուլում պարզվել է կազմակերպությանը մոլորության մեջ գցած հանգամանքները, ընկերությունը խնդրել է իր կողմից ներկայացված գնային առաջարկները չեղարկել և կազմակերպությանը չներառել գնումների ոչ հարգի սև ցուցակ:

v. Հանձնաժողովի 01.04.2021թ.-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 03.03.2021թ-ի ժամը 16:00-ին տեղի ունեցած գների շուրջ նվազեցման միաժամանակյա բանակցությունների արդյունքում, չգրանցած դեղերի մասով մասնակցած և ամենացածր գնային առաջարկներ ներկայացրած մասնակից՝ «Վիոլետա բժշկական կենտրոն» ՍՊԸ-ին, առաջարկվել է ներկայացնել հրավերով պահանջվող փորձագիտական եզրակացությունը: Վերջինս որպես փորձառություն չունեցող մասնակից խնդրել է, որպեսզի ժամանակ տրամադրեն անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու համար: 30.03.2021թ.-ին Մասնակցի կողմից ներկայացվել է դիմում, ըստ որի կազմակերպությունը չի կարող ապահովել անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացումը, ինչով պայմանավորված Հանձնաժողովը որոշել է մերժել Մասնակցի հայտը:

vi. ՀՀ առողջապահության նախարարությունն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 12.04.2021թ.-ի թիվ ԱԱ/06.3/7298-2021 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.04.2021թ.-ի թիվ 26/26-1/5691-2021 գրությամբ «Վիոլետա բժշկական կենտրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն

անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից դեղերի ձեռքբերման նպատակով 09.02.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2021/5» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Վիոլետա բժշկական կենտրոն» ՍՊԸ-ն 30.03.2021թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և խնդրել է, որ իր կողմից ներկայացված գնային առաջարկները չեղարկեն և կազմակերպությանը չներառեն գնումների ոչ հարգի սև ցուցակ:

01.04.2021թ.-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վիոլետա բժշկական կենտրոն» ՍՊԸ-ի կողմից 30.03.2021թ.-ին ներկայացված գրությունը, որոշել է մերժել Մասնակցի կողմից ներկայացված հայտը:

ՀՀ առողջապահության նախարարությունն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 12.04.2021թ.-ի թիվ ԱԱ/06.3/7298-2021 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 01.04.2021թ.-ին՝ Մասնակցի հայտը մերժելու հիմքով, սակայն ՀՀ առողջապահության նախարարությունն Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 12.04.2021թ.-ի թիվ ԱԱ/06.3/7298-2021 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում

է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՍՊԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն, ըստ էության, անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.04.2021թ.-ի թիվ 26/26-1/5691-2021 գրությամբ «Վիոլետա բժշկական կենտրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/102 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**